



**Խնդիր 3.** 10 լ ծավալով երկու միանման անոթներում լցված են համապատասխանաբար 2 մոլ ջրածին և 0.5 մոլ շմուլ գազ՝ հաստատուն ջերմաստիճանի պայմաններում:

11. **Նշե՛ք** սխալ պնդումը.

- 1) Ջրածնով լցված անոթի զանգվածն ավելի մեծ է շմուլ գազով լցված անոթի զանգվածից:
- 2) Ջրածնով լցված անոթում ատոմների քանակն ավելի մեծ է շմուլ գազով լցված անոթում ատոմների քանակից:
- 3) Ջրածնով լցված անոթում գազի հարաբերական խտությունն ըստ հելիումի 0.5 է:
- 4) Անոթների պարունակությունը խառնելիս կստացվի հելիումից ծանր գազային խառնուրդ:

12. **Հաշվե՛ք** շմուլ գազով լցված անոթում առկա ճնշումը (կՊա), եթե ջրածնով լցված անոթում ճնշումը 470.82 կՊա է:

- |           |          |            |          |
|-----------|----------|------------|----------|
| 1) 470.82 | 2) 117.7 | 3) 1883.28 | 4) 33.63 |
|-----------|----------|------------|----------|

Երկու անոթների պարունակությունները տեղափոխվել են 20 լ տարրողությամբ մեկ այլ անոթի մեջ:

13. **Հաշվե՛ք** այդ անոթում առկա գազային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):

- |       |       |        |         |
|-------|-------|--------|---------|
| 1) 12 | 2) 30 | 3) 7.2 | 4) 22.8 |
|-------|-------|--------|---------|

14. **Հաշվե՛ք** 20 լ տարրողությամբ անոթում ստեղծված ճնշումը (կՊա):

- |           |           |           |           |
|-----------|-----------|-----------|-----------|
| 1) 294.26 | 2) 470.82 | 3) 392.35 | 4) 706.23 |
|-----------|-----------|-----------|-----------|

15. **Հաշվե՛ք** թթվածնի այն ծավալը (լ, ն.պ.), որն անհրաժեշտ է ստացված գազային խառնուրդը լրիվ այրելու համար:

- |         |       |       |         |
|---------|-------|-------|---------|
| 1) 22.4 | 2) 28 | 3) 56 | 4) 8.96 |
|---------|-------|-------|---------|

#### **Կարճ պատասխանով առաջադրանքներ**

**Խնդիր 4.** 4.2 գ X մետաղը լուծել են նոսր աղաթթվում: Լուծույթը գոլորշիացրել են, ստացված պինդ մնացորդը լուծել են 1 լ ջրում: Այդ լուծույթից վերցրել են 10 մլ չափանմուշ, որի վրա ավելացրել են արծաթի նիտրատի լուծույթ (վերցված է ավելցուկով): Առաջացել է 0.2512 գ նստվածք: X մետաղն այրելիս առաջանում է A օքսիդը: A-ն ստացվում է նաև X մետաղի և ածխաթթու գազի փոխազդեցությունից:

16. **Գտե՛ք X** մետաղը: Պատասխանում **գրե՛ք X** մետաղի հարաբերական ատոմային զանգվածը:

17. **Հաշվե՛ք X** մետաղի այն նմուշի զանգվածը (գ), որը պարունակում է  $2.2575 \times 10^{23}$  ատոմներ:

18. **Հաշվե՛ք** թթվածնի այն ծավալը (ն.պ.), որն անհրաժեշտ է 420 գ X մետաղը լրիվ այրելու համար:

19. **Գրե՛ք X-ի** և ածխաթթու գազի փոխազդեցության գազային վերջանյութի մոլային զանգվածի թվային արժեքը:

20. Ի՞նչ աղային միացություն կստացվի, եթե X-ի և ածխաթթու գազի փոխազդեցության ժամանակ ածխաթթու գազը վերցվի ավելցուկով: **Գրե՛ք** այդ աղային միացության մոլային զանգվածի թվային արժեքը: